



ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում  
Քրեական գործ ԸԻԴ N 0033/01/2015թ.

Քրեական գործ ԸԻԴ N 0033/01/2015թ.

Նախագահող դատավոր՝ Կ.Սաղյան  
Դատավորներ՝                    Հ.Աբրահամյան  
  Լ.Ավանեսյան

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

8-ին հոկտեմբերի 2015թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝  
վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր           Վ.Հովսեփյանի  
  դատավորներ՝           Ա.Աբրահամյանի  
  Ա.Հայրապետյանի

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ըստ մեղադրանքի Յաշա Միքայելի Առաքելյանի՝ նախատեսված ԼՂՀ քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015թ. օգոստոսի 26-ի որոշման դեմ ԼՂՀ գլխավոր դատախազ Ա.Մոսիսյանի վճռաբեկ բողոքը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

2015 թվականի մարտի 28-ին ԼՂՀ ոստիկանության քննչական վարչության բաժնում ԼՂՀ քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 131012.15 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2015 թվականի հունիսի 7-ի որոշմամբ Յաշա Առաքելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Նույն օրը նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրությունը չհեռանալու մասին:

Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ 2015 թվականի մայիսի 25-ին ուղարկվել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Դատարան):

Դատարանի 2015 թվականի հուլիսի 3-ի դատավճռով Յաշա Առաքելյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և ԼՂՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 /երկու/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Յաշա Առաքելյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրությունը չհեռանալու մասին փոխվել և նրա նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

Դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք են բերել ամբաստանյալ Յա.Առաքելյանը և նրա պաշտպան Գ.Բաղդյանը:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է. Դատարանի 2015 թվականի հուլիսի 3-ի դատավճիռը պատժի կրման մասով բեկանվել և փոփոխվել է:

Յա. Առաքելյանի նկատմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և ԼՂՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված 2 /երկու/ տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժը ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանվելով փորձաշրջան՝ 2 /երկու/ տարի ժամկետով՝ նրա վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դնելով ԼՂՀ քրեակատարողական վարչության վրա:

Յա. Առաքելյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը վերացվել է և նա ազատ է արձակվել դատական նիստերի դահլիճից:

Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ԼՂՀ գլխավոր դատախազ Ա.Մուսիյանը:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գերագույն դատարանի 2015թ. սեպտեմբերի 30-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

**2.Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Դատարանի դատավճռով Յաշա Միքայելի Առաքելյանը դատապարտվել է այն բանի համար, որ նա 2014 թվականի ապրիլ ամսում, Մարտակերտի շրջանի Շահմասուր գյուղի վարչական տարածքում տեղակայված <<Խուզալար>> կոչվող վայրում, ապօրինի աճեցրել է թվով 7 թուփ մշակումն արգելված կանեփ տեսակի բույս, որոնցից 2014 թվականի հոկտեմբեր ամսվա վերջերին մասնիկներ պոկելու, չորացնելու և մանրացնելու եղանակով, իրացնելու նպատակով ապօրինի պատրաստել է խոշոր չափերի հասնող՝ 185.2 գրամ ընդհանուր չոր քաշով մարիխուանա տեսակի թմրամիջոց, որը փաթեթավորել է թվով 7 սովորաբար փաթեթների մեջ և հետագայում իրացնելու նպատակով, 1 փաթեթը՝ 11.8 գրամ չոր քաշով, ապօրինի պահել է իր տան կից անասնագոմի տանիքում, իսկ մնացած թվով 6

փաթեթները՝ 173.4 գրամ չոր քաշով պահել է իր տան հարևանությամբ տեղակայված, իր կողմից օգտագործվող անասնագոմփի տանիքում, որից 2015 թվականի մարտի 18-ին խոշոր չափերի հասնող՝ 6 գրամ քաշով, թվով 1 ստվարաթղթե փաթեթ, ապօրինի, անհատույց, իրացրել է իր ծանոթ Էրիկ Գարայանին և վերջինիս ընկեր Լևոն Ղարիբյանին, իսկ մնացած մասը՝ 179.2 գրամ ընդհանուր չոր քաշով, խոշոր չափերի հասնող մարիխուանա տեսակի թրամիջոցն իրացնելու նպատակով շարունակել է ապօրինի պահել նույն տեղերում, ինչն էլ 2015 թվականի մարտի 19-ին, ժամը 14.00-ի սահաններում ոստիկանության աշխատակիցների կողմից անասնագոմփերի զննության ժամանակ հայտնաբերվել և վերցվել է:

Դատարանը, Յա. Առաքելյանի նկատմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի կիրառմամբ՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ նշանակելով, հաշվի է առել նրա խոստովանական ցուցմունքներ տալը, ԼՂՀ պաշտպանության համար մղված մարտերին մասնակցելը, երկրորդ խմբի հաշմանդամ և թոշակառու լինելը, ինչպես նաև պատիժ նշանակելու պահին խնամքին երկրորդ խմբի հաշմանդամ որդու և ծանր հիվանդությամբ տառապող կնոջ առկայությունը:

Վերաքննիչ դատարանը, նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելով, հաշվի է առել այն, որ Յա. Առաքելյանը նախկինում դատապարտված չի եղել, նրա կողմից ինքնախոստովանական ցուցմունքներ տալը, ԼՂՀ պաշտպանության համար մղված մարտերին մասնակցից լինելը, պատերազմի երկրորդ խմբի հաշմանդամ և թոշակառու լինելը, ՀՀ Նախագահի 2007թ. մայիսի 04-ի հրամանագրով «Մարտական ծառայություն» մեդալով և ԼՂՀ պաշտպանության, Արցախի պետականության կայացման գործում ունեցած ավանդի և Հայրենիքի պաշտպանի օրվա կապակցությամբ Արցախի ազատամարտիկների միության կողմից 2007թ. փետրվարի 25-ին պարգևատրված լինելը, պատիժ նշանակելու պահին խնամքին երկրորդ խմբի հաշմանդամ որդու և ծանր հիվանդությամբ տառապող կնոջ առկայությունը, որդու ամուսնացած լինելը և նրա խնամքին ևս երկու անչափահաս երեխա ունենալը, ընտանիքի միակ կերակրող հանդիսանալը, կատարածի համար զոջալը, բնակության վայրից դրական բնութագրվելը, ինչպես նաև մի խումբ համագյուղացիների կողմից Վերաքննիչ դատարանին հասցեագրված դիմում-խնդրանքը՝ նրա ընտանիքի շատ ծանր նյութական դրության մեջ գտնվելու մասին:

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանն որոշում կայացնելիս թույլ է տվել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 411-րդ, 413-րդ, 415-րդ և 417-րդ, ԼՂՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 47-րդ, 59-րդ, 61-րդ և

69-րդ հոդվածների պահանջների խախտումներ, դրանով իսկ թույլ տալով դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկների՝ բողոք բերող անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանը նշված որոշման մեջ ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 59-րդ, 47-րդ, 60-րդ, 61-րդ և 69-րդ հոդվածների, ԼՂՀ Գերագույն դատարանի ԸԻԴ 0118/01/12 քրեական գործով կայացրած որոշման բովանդակության և ամբաստանյալ Յա.Առաքելյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող, նրա անձը բնութագրող հանգամանքների շարադրանքից հետո եկել է այն եզրակացության, որ <<Գործում Յաշա Առաքելյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների, անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում Դատարանը նրա նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը կրելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելով թույլ է տվել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, չի կիրառել օրենքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման: Դա հանգեցրել է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի պահանջների չհամապատասխանող և չհիմնավորված որոշման կայացմանը, ինչը նույն օրենսգրքի 416-րդ հոդվածով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում է>>:

Բողոքաբերի պնդմամբ, Վերաքննիչ դատարանի կողմից հաշվի առնված ամբաստանյալի անձը բնութագրող և պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները չեն վկայում այն առավել նվազ հանրային վտանգավորության առկայության մասին, որը բնորոշ է Յա. Առաքելյանի կատարած հանցագործությանը: Դրանք չեն նվազեցնում ամբաստանյալի կատարած արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և Յա. Առաքելյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու օբյեկտիվ հիմք չեն ու չեն կարող ապահովել պատժի նպատակները:

Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը եզրահանգել է, որ Յա. Առաքելյանի նկատմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելն անարդարացի է ու անհամաչափ՝ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում ամբաստանյալի կատարած հանցագործության ծանրությանը, որը ԼՂՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է ծանր հանցագործություն ու չի նպաստում արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի անշեղ իրականացմանը, ուստի խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2015 թվականի օգոստոսի 26-ի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 2015 թվականի հուլիսի 3-ի դատավճռին:

#### 4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է:

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում քննության առնելով գործի նյութերը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները: Սոցիալական արդարությունը վերականգնելու նպատակը բխում է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքն ամրագրած ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի բովանդակությունից: Այն սահմանում է, որ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի, համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Սոցիալական արդարության վերականգնումը հնարավոր է, եթե հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվի այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ ու բավարար է նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:

Պատիժ նշանակելու արդարության սկզբունքը դրսևորվում է օրենքով նախատեսված մի շարք պահանջներով: ԼՂՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պատժի տեսակը և չափը որոշվում է հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրվող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով: Պատիժը համարվում է արդարացի, եթե դատարանը ճիշտ է գնահատում գործի բոլոր հանգամանքները, անձին բնութագրող բոլոր տվյալները և քրեական օրենքով նախատեսված պահանջներից ելնելով, հանցագործության մեջ մեղավոր անձի նկատմամբ նշանակում է այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ և բավարար է այդ անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Փաստորեն պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց ռեալ /իրական/ պատիժ

նշանակելու դատապարտյալի ուղղվելու հնարավորության մասին: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ԼՂՀ քրեական օրենսգրքին ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը:

Ինչպես երևում է գործի նյութերից՝ Յա. Առաքելյանը 2014թ. ապրիլ ամսում, Մարտակերտի շրջանի Շահմասուր գյուղի «Խուզալար» կոչվող վայրում, ապօրինի աճեցրել է 7 թուփ մշակումն արգելված կանեփ տեսակի բույս, որոնցից մասնիկներ պոկելու, չորացնելու և մանրացնելու եղանակով, իրացնելու նպատակով ապօրինի պատրաստել է խոշոր չափերի հասնող՝ 185.2 գրամ ընդհանուր չոր քաշով մարիխուանա տեսակի թմրամիջոց, որը փաթեթավորել է թվով 7 սովորաթղթե փաթեթների մեջ, որից 1 փաթեթը ապօրինի պահել է իր տան կից անասնագումի տանիքում, իսկ մնացած թվով 6 փաթեթները՝ իր տան հարևանությամբ տեղեկայված, իր կողմից օգտագործվող անասնագումի տանիքում, որից 2015թ. մարտի 18-ին խոշոր չափերի հասնող՝ 6 գրամ քաշով, թվով 1 սովորաթղթե փաթեթ, ապօրինի, անհատույց, իրացրել է իր ծանոթ Էրիկ Գարայանին և վերջինիս ընկեր Լևոն Ղարիբյանին, իսկ մնացած մասը՝ 179.2 գրամ ընդհանուր չոր քաշով մարիխուանա տեսակի թմրամիջոցն իրացնելու նպատակով շարունակել է ապօրինի պահել նույն տեղում, ինչն էլ 2015թ. մարտի 19-ին, ժամը 14-ի սահմաններում ոստիկանության աշխատակիցների կողմից անասնագումերի զննության ժամանակ հայտնաբերվել և վերցվել է:

Ամբաստանյալ Յա. Առաքելյանի կողմից ծանր հանցագործության կատարման վերը նշված հանգամանքները վկայում են նրա անձի հասարակական վտանգավորության բարձր աստիճանի մասին և բացառում են նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը:

Փաստորեն առանց հաշվի առնելու գործի վերը նշված հանգամանքները, Յա. Առաքելյանի նկատմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չի կիրառվել, ինչն անարդարացի է ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում տվյալ հայցագործության հասարակական վտանգավորությանը, նրա կատարած հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին:

Գերագույն դատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ Դատարանը կայացրել է օրինական և հիմնավորված դատավճիռ ու, հաշվի առնելով բոլոր մեղմացնող հանգամանքները, նշանակել է հոդվածի սանկցիայով նախատեսված նվազագույն չափից ավելի ցածր պատիժ, և որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանի կողմից ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը չի կարող ապահովել պատժի նպատակները, ուստի Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ԼՂՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի նորմերի՝ 5-րդ, 10-րդ և 59-րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում, որը ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 370-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող անօրինական և չհիմնավորված որոշման կայացմանը:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են պատժի մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 413-րդ, 415-րդ, 416-րդ և 424-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի դատական ակտում մատնանշված Գերագույն դատարանի ԸԻԴ 0118/01/12 քրեական գործով նախադեպային նշանակություն ունեցող որոշմանը, Գերագույն դատարանը փաստում է, որ համաձայն ԼՂՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ կետի՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Գերագույն դատարանի դատական ակտի հիմնավորումները /այդ թվում օրենքի մեկնաբանությունները/ պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Այնինչ, Վերաքննիչ դատարանի դատական ակտում մատնանշված վերոնշյալ որոշումը վերաբերում է գողության հանցափորձին, որը դասվում է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների թվին, իսկ սույն քրեական գործը՝ բնակչության առաջության դեմ ուղղված հանցագործությունների թվին և տվյալ դեպքում տարբեր են դրանց ինչպես փաստական հանգամանքները, այնպես էլ վտանգավորության ու ծանրության աստիճանները, ուստի Վերաքննիչ դատարանի կողմից նշված գործին հղում կատարելը և որոշմամբ արտահայտած դիրքորոշումն անհիմն է և անօրեն:

Գերագույն դատարանը գտնում է, որ քանի որ գործով հերքվում են Վերաքննիչ դատարանի որոշման մեջ նշված Յա. Առաքելյանի նկատմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածը կիրառելու մասին փաստարկները, և հաստատվում են պատիժ նշանակելու վերաբերյալ Դատարանի դատավճռի օրինական, հիմնավորված ու պատճառաբանված լինելը, անհրաժեշտ է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ տալ Դատարանի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 435- 436, 438-440 հոդվածներով՝ Գերագույն դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. ԼՂՀ գլխավոր դատախազ Ա.Մուսիյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Յաշա Միքայելի Առաքելյանի վերաբերյալ ԼՂՀ քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015թ. օգոստոսի 26-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2015թ. հուլիսի 3-ի դատավճռին՝ Յաշա Միքայելի Առաքելյանին վերադարձնելով ԼՂՀ Ոստիկանության քրեակատարողական վարչություն՝ պատիժը կրելու:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ**

**Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

**Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**